ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Առաջարկվում է նախագծով ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետևյալ բովան-դակությամբ նոր նախադասություն. «Սույն մասի կիրառության իմաստով տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ կազմակերպությունների և (կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս սկսվող և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ավարտվող բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը:»:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է նախագծի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքի 2–րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և այն տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:»:	Ընդունվել է	Ընդունվել է